Annex IX

Բուհերում ուսանողական ինքնակազմակերպվող խմբերի ձևավորման մեթոդաբանությանն ուղղված քննարկում (ապրիլի 27, 2022)

Խմբային քննարկումների նշումներ
մայիսի 3, 2022

Խումբ 1. Ուսանողական մարմինների ձևավորման կարգը
Մոդերատորներ՝ Յուրի (Ռեստարտ), Արփինե (ԵՀՀ)

Քննարկված հարցեր

- Ովքե՞ր են որոշում կարգի ձևավորման սկզբունքները
- Ինչպե՞ս է խումբը համարվում խումբ, իսկ միավորը՝ միավոր
- Ի՞նչ առաքելություն կարող է ունենալ ունենա
- Ի՞նչ կարգավիճակ կարող է ունենա
- Քանի՞ հոգանոց խումբ պիտի լինի
- Անդամավճարո՞վ, թե՞ առանց
- Ռեսուրսների հասանելիություն (տարածք, տեխնիկա և այլն։

Առաջին հերթին քննարկվեց ուսանողական մարմինների/խմբերի տեսակները, դրանցից յուրաքանչյուրի առաքելությունը։ Առանձնացվեցին խմբերի երկու տեսակներ՝ ներկայացուցչական և թեմատիկ/ժամանցային։

Խնդիրներ

- ուսանողների շրջանում հետաքրքրության և մոտիվացիայի պակաս
- հնարավորությունների լայն շրջանակ, որը հանգեցնում է ՈՒԽ-ին միանալու հետաքրքվածության պակասի
- ռեսուրսների ոչ համաչափ բաշխում
- ուսանողական խորհուրդների՝ խիստ անձնավորված լինելը
- ՈՒԽ-ն չի զբաղվում ուսանողների իրավունքների պաշտպանությամբ
- ուսանողական մարմնի անդամները անփոփոխ են, ուսանողները տեղյակ չեն գործընթացներից և կարծիք հայտնելու հնարավորություն չեն ունենում
- ընտրական գործընթացների իրազեկվածության և հաղորդակցության պակաս ուսանողների շրջանում
- ուսանողներին հասանելի ռեսուրսները քիչ են

- ուսանողների զբաղվածության խնդիր
- ՈՒԽ մարմնին փոխարինող այլընտրանքային տարբերակի կարիք

Առաջարկություններ

- ԿԳՄՄՆ-ն պետք է սահմանի ուսանողական մարմինների գործունեության ընդհանուր սկզբունքներ, որպեսզի բոլոր բուհերը աշխատեն միևնույն ընթացակարգով
- ուսանողական մարմինների գործունեության դաշտը պետք է որոշվի բուհի կողմից, բայց ընդհանուր սկզբունքները պետք է ֆիքսվեն փաստաթղթերով
- անհրաժեշտ կլինի կանոնակարգը ադապտացնել բուհերի կարիքներին և տալ ճկուն կարգավորումներ անելու հնարավորություն
- ուսանողները ինքնուրույն պետք է կարողանան առանձնացնել իրենց կարիքները, յուր. ուսանողական մարմնի ներկայացուցիչը պետք է ընտրվի նախարարության կողմից, իսկ թեմատիկ/ժամանցային ուսանողական խմբերի դեպքում՝ պաշտոնապես ընտրելու ընթացակարգ սահմանելու կարիք չի լինի
- պետք է բուհում լինի հատուկ հանձնաժողով, որը կգրանցի ուսանողների կողմից ներկայացված հետաքրքրությունները, կարիքները
- բուհերը պետք է ներքին ֆինանսավորման ճկուն մեխանիզմներ մշակեն
- պետք է բոլոր ուսանողներին մատչելի ձևով ներկայացնել ուսանողական մարմինների գործունեության ընթացքը և հնարավորությունները, որպեսզի ցանկանան իրենք էլ ներգրավվել
- ուսանողներին ավելի ակտիվ ներգրավել որոշումների կայացման պրոցեսներում
- բուհում ունենալ ուսանողական օմբուդսմեն, ով կկարողանա ուսանողների իրավունքների վերաբերյալ ընթացակարգերը ներկայացնել

Խումբ 2. Ֆոնդհայթհայթում

Մոդերատորներ՝ Իզաբելլա (ԵՀՀ), Սամվել (ԵՀՀ)

Քննարկված հարցեր

- Հաշվապահությունը Ինչպե՞ս է անցկացվելու
- Բուհի դերակատարությունը ֆոնդահայթայթման մեջ
- Միավորը պիտի՞ լինի առանձին իրավաբանական անձ, թե չէ
- Դրամաշնորհի կարո՞ղ են դիմել, թե՞ չէ
- Նախարարության դերը
- Պոտենցիալ աջակիցների քարտեզագրում

(բուհից, պետությունից, միջազգային կառույցից ակնկալիքները)

1. «Քաղաքականություն» բառը լոկալ կոնտքեստում երկար տարիներ հեղինակազրկվել է, մինչդեռ հակառակ պարագայում այն անգամ ունի պարտադիր բնույթ առողջ հասարակություն ունենալու համար։
2. Գոյություն ունի հարց «դրսի» համալսարանների կարգավորումների հետ կապված vis-à-vis հայաստանյան կանոնադրությունների և կարգավորումների։ Օրինակ՝ Սլավոնական համալսարան, Ամերիկյան համալսարան և այլն։ Սլավոնական համալսարանում, չնայած կոնկրետ ուղղվածության, ըստ ՈՒԽ նախագահի, չկա որևէ քաղաքական կամ այլ ճնշում ազատ կամարտահայտման վրա։
3. ՀՀ պետական բուհերին պատվեր է տալիս՝ պետք են մասնագետներ, քաղաքացիներ, արժեհամակարգ։ Լիցենզավորում ա, ու, անհամաձայնության դեպքում, զրկի լիցենզիայից։
4. Գոյություն չունի միանման մոտեցում, որովհետև համալսարանները տարբերվում են, մյուս կողմից էլ՝ քիչ են լինում դեպքեր, երբ Գևորգի ասած եռանկյունին հավաքվի։
5. Եթե կա ոչ ֆորմալ խումբ, ապա կարող են գրանցվել ու դառնալ ՀԿ, ապա նախարարությունից փոքր գրանտ շահել։
6. Armeps (Արմեփս) առցանց համակարգ դրամաշնորհների դիմելու համար
7. Հարցնել նախարարությանը՝ ոնց կարող են գրել կանոնադրությունները։
    - Բուհը ունի տարեկան X բյուջե, որ ժամանակին տալիս էր ՈՒԽ / ՈՒԳԸ-ին։
    - Այժմ կբաշխի մրցութային կարգով։
    - Կարող են դիմել ամեն տարի, որպեսզի ստանան բյուջե՝ ներկայացնելով ծրագիր։
    - Յուրաքանչյուր ԲՈՒՀ ինքն է պատասխանատու իր կանոնակարգի համար։

- Ո՞վ է ընտրելու։ Մի հոգի նախարարությունից, մի հոգի ուսանող, ադմինիստրացիա։ Այլ կերպ ասած՝ պետք է ընտրել գրանտի ընտրման հանձնաժողով։
- Ի՞նչ ստատուս պիտի ունենան, որ կարողանան միջհամալսարանական գրանտներից բացի բերել նաև դրսից փող։

Խումբ 3. Որոշումների կայացում
Մոդերատորներ՝ Գարիկ (Ռեստարտ), Ասպրամ (Ռեստարտ)

Քննարկված հարցեր

- Հոգաբարձուների խորհուրդ
- Ներկայացուցչականության հարցը, բաշխվածությունը
- Բացի ֆորմալ օրենսդրական հարթակներից էլ ո՞նց կարելի ա որոշումները կայացնել, մոնիթորի՞նգ, մոբիլիզացիոն գործիքներո՞վ

(Եղած հարթակներ, լրացուցիչ հարթակներ, ո՞նց են հարաբերվում ՈՒԽ-ի հետ ու հոգաբարձուների խորհրդի հետ)

Թիմային քննարկման արդյունքում վեր հանվեցին մի շարք առաջարկներ, որոշումների կայացման գործընթացի մասնակցայնությունն խումբն բաժանեց երկու մասի՝ ֆորմալ և ոչ ֆորմալ։

Որոշումների կայացման վրա ազդեցության ոչ ֆորմալ մեխանիզմներ

- խնդիրների բարձրաձայնում ԶԼՄ-ների միջոցով
- Նոր ձևավորված միավորումները կարող են հարցումներ ուղարկել բուհի ադմինստրացիա, դեկանատներ, ռեկտորատ՝ հղվելով տեղեկատվության ազատության մասին օրենքին։
- Ինչպես նաև կազմակերպել ակցիաներ, դասադուլներ և այլն….

Որոշումների կայացման վրա ազդեցության ֆորմալ մեխանիզմներ

- Բուհի կառավարման ֆորմալ համակարգեր են համարվում Հոգաբարձուների խորհուրդը, Գիտխորհուրդը, որտեղ մինչ այսօր ներկայացված է միայն բուհի ուսանողական խորհուրդը։
- Քննարկման արդյունքում խումբն առաջարկեց սահմանել որոշակի չափորոշիչներ, որոնց համապատասխանության դեպքում ձևավորված միավորումները կարող են անդամակցել Հոգաբարձուների խորհրդին և Գիտխորհրդին։

Չափորոշիչները ներառում են.

- միավորման անդամների քանակը
- միավորման գործունեության ուղղվածությունը
- գործունեության հետագիծը

Դիցուք, գիտխորհրդի նիստերին կարող են մասնակցել հետազոտություններ իրականացնող միավորումները, որոնք ունեն հինգ անդամ և տվյալ պահին իրականացրել են երեք հետազոտություն։

Քննարկվեց նաև բուհերի ներսում «Ուսանողական խորհրդարան» ստեղծելու տարբերակը։ Խորհրդարանը կազմված կլինի ձևավորված բոլոր միավորումների անդամներից (օրինակ՝ յուրաքանչյուր միավորումից հինգ անդամ) և ուսանողական խորհրդի ներկայացուցիչներից։ Խորհրդարանը կստանա որոշակի լիազորություններ՝ ուսանողական ինքնակառավարման գործընթացը կազմակերպելու համար և կունենա որոշակի պարտավորվածություններ։ Գիտական խորհրդի և հոգեբարձուների խորհրդի նիստերից առաջ խորհրդարանում տեղի կունենան քննարկումներ և ընտրություններ։ Խորհրդարանը կքննարկի խորհրդում քննարկվող հարցերը, կընտրվեն ներկայացուցիչներ, որոնք խորհրդում կներկայացնեն ուսանողների տեսակետները։

Խումբ 4. Իրազեկում

Մոդերատորներ՝ Կոլյա (ԵՀՀ), Դիանա (ԵՀՀ)

Քննարկված հարցեր

- Ներքին ու արտաքին հաղորդակցության կազմակերպման մեջ առկա խնդիրներն ու հնարավորությունները
- Ի՞նչ կարող է անել բուհը
- Ի՞նչ կարող է անել պետությունը
- Ի՞նչ կարող է անել քաղհասարակությունը

Ներկա հաղորդակցության մեթոդներ.

- Շրջաբերականներ,
- Ակադեմիական խորհդատուներ,
- ՈՒԳ, ՈՒԽ կողմից իրականացվող իրազեկման ծրագրեր,
- Վեբկայք,
- Բանավոր տեղեկատվություն։

Խնդիրներ.

- Շրջաբերականների և կայքի նյութերի լեզուն բարդ է և չի խթանում ուսանողների մասնակցայնությանը։
- Ժամանակակից հաղորդակցության միջոցների սղություն և կարողությունների բաց։

Առաջարկություններ.

- Բարելավել եղած ուսանողական խմբերի (ՈՒԳ, ՈՒԽ) ռազմավարությունը, զարգացնել հաղորդակցական կարողությունները։
- Ժամանակակից հաղորդակցական գործիքները կիրառելու նպատակով համագործակցել քաղհասարակության հետ.
    - Տեղանյութերի պատրաստման մասով,
    - Սոցիալական մեդիա հարթակները զարգացնելու մասով,
    - Մեյլային տեղեկագրեր (Newsletters) պատրաստելու համար։
- Քննարկել ֆոնդհայթայթման արշավներ սկսելու և համապատասխան ռազմավարություն մշակելու հնարավորությունը։
- Խորացնել քաղհասարակություն-ԲՈՒՀ կապը։
- Քննարկել բուն հաղորդակցական/մեդիա ուղղվածություն ունեցող ուսանողական խմբավորում հիմնելու նպատակահարմարությունը։

Խումբ 5. Մոտիվացիա
Մոդերատորներ՝ Աշոտ (ՀՌԿԿ), Սոնա (ՀՌԿԿ)

Քննարկված հարցեր

- Պարզել, ուսանողներին ինչի՞ ա պետք անդամակցել
- Հարցնել, թե ի՞նչ ա պետք, որ ուսանողը անդամակցի։
- Ի՞նչը կշահագրգռեր, որ ստեղծեիք խումբ/միավոր։
- Ի՞նչ է ստանում ուսանողը (առավելությունների առումով)։

Բուհերում ինքնակազմակերպվող խմբերի ձևավորման միջոցառման 5-րդ խմբում էին ընդգրկված ուսանողներ Վանաձորի պետական համալսարանից, ԵՊՀ-ից, Գեղարվեստի պետական համալսարանից, Երևանի մանկավարժական համալսարանից և բուհի մեկ աշխատակից։ Մասնակիցների շրջանում կային նաև ուսանողական խորհուրդների ղեկավարներ և փոխնախագահներ։

Հինգերորդ խմբի թեման ուսանողական միավորումների ձևավորման և դրանց անդամակցության շարժառիթներն էին։ Մասնակիցները, մոդերատորի առաջարկությամբ, պատասխանեցին երկու հարցի՝ ի՞նչ մոտիվացիա ունեն ուսանողը, համալսարանն ու նախարարությունը ինքնակազմակերպվող խմբեր ձևավորելու համար, և ի՞նչ կարող են ներդնել իրենցից յուրաքանչյուրն այդ գործընթացի համար։ Միակ հարցը, որի շուրջ որոշ անհամաձայնություն եղավ մասնակիցների միջև իրավունքների պաշտպանության գործառույթն էր, որն ըստ ուսանողական խորհրդի երկու ներկայացուցիչների՝ հիմնականում/միայն ուս. խորհրդի գործառույթն է, իսկ մասնակիցներից մեկի առաջարկով՝ նաև կարող է իրականացվել հատուկ այդ խնդրի համար ստեղծված խմբի կողմից։ Տվյալ կետն ավելացվել է ցուցակում։

Ընդհանուր առմամբ խմբում առկա էր կառուցողական, դրական և խնդրի վերաբերյալ մտահոգ մթնոլորտ։ Խմբի բոլոր մասնակիցները կետեր առաջարկել են։ Մասնակիցների ստացած արդյունքը կարելի է գնահատել համապարփակ և կարևոր։

Ուսանողի շարժառիթների մեջ խմբի կողմից ներառվել են՝

- նոր կապեր ձեռք բերելու հնարավորությունը
- փորձի փոխանակման հնարավորությունը
- ուսանողի իրավունքների պաշտպանությունը
- որոշումների կայացմանը մասնակցելը
- հավասարության հաստատումը
- մասնագիտական աճի հնարավորությունը

- հավելյալ ֆինանսավորում ստանալու հնարավորությունը
- ժամանցը
- ուսման վարձի զեղչերը ակտիվության և հաջողությունների համար
- զեղչեր ոլորտին առնչվող ծառայությունների համար/վայրերում
- ՄՈԳ-ի բարձրացում

Բուհի շարժառիթներն են ըստ խմբի՝
- արտաքին ֆինանսավորման ներգրավումը
- հեղինակության/վարկանիշի բարձրացում
- միջբուհական համագործակցություն
- միջազգային համագործակցություն խմբերի միջոցով
- նոր ուսանողների ներգրավում

Ոլորտային նախարարության շարժառիթներն ըստ մասնակիցների՝
- Հայաստանի ներկայացվածություն միջացգային հարթակներում խմբերի ակտիվության շնորհիվ
- անմիջական կապ և տեղեկատվության բազմազան աղբյուրներ ուսանողության հետ առնչվող տարբեր սուբյեկտներից
- ակտիվ քաղաքացու կայացում
- արտաքին ֆինանսավորման ներգրավում խմբերի կողմից
- արտագաղթի տեմպերի կրճատում

Ի՞նչ կարող է գործընթացին տալ գործող սուբյեկտներից յուրաքանչյուրը հատվածում մասնակիցները թվարկում էին այն բոլոր բաղադրիչները, որոնք կարող են ներդնել ուսանողը, համալսարանն ու նախարարությունը։

«Ի՞նչ կարող է տալ ուսանողը ձևավորվող կամ ձևավորված խմբերին» հարցին մասնակիցները պատասխանել են՝
- ժամանակ
- հետևողականություն
- փորձ
- իրենց շրջքապատի ներգրավում

Ըստ մասնակիցների՝ համալսարանը և դասախոսական կազմը կարող են ներդնել՝
- ֆինանսներ
- ժողովրդավար և ստեղծագործական միջավայր
- տարածք
- ինքնավարության հնարավորություն
- իջեցնել գաղափարներ

- կիսվել մասնագիտական փորձով
- որոշ ազատ ժամանակ տրամադրել դասերի հաշվին
- գործընթացի ակտիվ իրազեկում իրականացնել

Նախարարությունը կարող է ներդնել՝

- ֆինանսեր
- ուսման վարձի զեղչեր
- մրցանակներ
- ուսանողների վերապատրաստում
- հեղինակավոր մասնագետներ
- իրազեկել հանրությանը խմբերի հաջողությունների և հնարավորությունների մասին
- ապահովել աշխատանքով աչքի ընկած ուսանողներին
- ուսումնասիրել և կիսվել միջազգային փորձով

Խումբ 6. Ուսանողական միավորների գործունեության սկզբունքներ և շրջանակ
Մոդերատորներ՝ Դիանա (Ռեստարտ), Էրիկ (Ռեստարտ)

Նոր ձևավորված խմբերի հիմնական առաքելությունն է ապահովել պարտադիր ուսումնական պլանից դուրս ուսանողների ոչ ֆորմալ կրթության ձեռք բերումը, ուսանողների կողմից հանրային քննարկումների իրականացման խթանումը:
Խումբը պետք է ունենալ ներքին ինքնավարություն, կախված իր գործունեության շրջանակից նաև ապահովի ուսանող-դասախոս հարաբերությունների կարգավորում:

Շրջանակը՝
Մշակութային խումբ
Իրավաբանների
Քաղաքագետների
Լրագրողների
Մոնիթորինգով զբաղվողների
Սպորտային
Պատմաբանների և այլն

Հարցերը, որ առաջացան. Արդյո՞ք համալսարանի տարբեր ֆակուլտետներում կարող են առաջանալ տարբեր նույն անուններով խմբեր, արդյո՞ք դա չի առաջացնելու խառնաշփոթ վիճակ /օրինակ՝ և՛ բանասիրության, և՛ ռադիոֆիզիկայի ֆակուլտետներում բացվի սպորտով զբաղվողների խումբ/:
Քանի՞ հոգուց բաղկացած խումբը կարող է համարվել ինքնակառավարվող մարմին, որը կարող է դիմել որևէ ծրագրային առաջարկով համալսարանին:
Արդյո՞ք և՛ մոնիթորինգով զբաղվող ուսանողական խումբը, և՛ ժամանցային բնույթ ունեցող ուսանողական խմբի անդամները ունեն հավասար մասնակցայնություն բուհի կառավարման գործընթացում:
Հարց որը կապ չունի մեր շրջանակի հետ բայց քննարկվել է. նոր ձևավորվող խմբերը մա՞ս են արդյեոք 25 տոկոսի թե դրա անդամ են միայն ՈՒԽ անդամները: